04.02.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.3259.26

*Բենեֆիցիար՝*
*ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան*

**ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.3259.26**

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/34 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցությունից բխող՝ Պրինցիպալի՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 3,950,000.00 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության 900435002101 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է Բենեֆիցիարի կողմից ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/34 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված 120 (մեկ հարյուր քսան) աշխատանքային օր, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 01 սեպտեմբերի 2026թ. ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն Երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.) ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ masismer.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին։

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագած վեճերը քննվում են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար**

**Սուրեն Քոչարյան**

Digitally signed by MURADYAN ASHOT 1514530155
Date: 2026.02.04 15:42:29

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou